



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՀԱՆՎՆԵՐՈՒ ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՅ ԱՄԵՏ. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՆՈՐԸՆՏԻՐ ՆԱԽԱԳԱՅ ՎԵՐ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԵԼԻՄԵԱՆԸ

Չորեքշաբթի, 29 հոկտեմբեր 2008ի առաւօտուն, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ Արք. Մարտիրոսեան, Ազգային Առաջնորդարանին մէջ ընդունեց այցելութիւնը Հայ Աւետարանական Համայնքի Համաշխարհային Խորհուրդի նորընտիր Նախագահ եւ Սուրբոյ Հայ Աւետարանական գաղութի Համայնքապետ՝ Վեր. Յարութիւն Սելիմեանը, ընկերակցութեամբ Հայ Աւետ. Եկեղեցիներու միութեան գանձապահ՝ Տիար Զաւէն Խանճեանի: Հանդիպումին, Առաջնորդ Սրբազան Հօր կողքին, ներկայ եղան նաեւ Գանատայի Թեմի Առաջնորդ՝ Բարձր. Տ. Խաժակ Արք. Յակոբեան, Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ՝ Բարձր. Տ. Շահան Եպս. Սարգիսեան, որոնք հիւրաբար Թեմս կը գտնուին, եւ Առաջնորդարանի քրիստոնէական Դաստիարակութեան վարիչներէն Հոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիլիմեան:

Հանդիպումը առիթ եղաւ փոխադարձ ծանօթացման ու հոգեւոր ծառայութեան մասին տեղեկութեանց փոխանակման: Առաջնորդ Սրբազանը նախ ընդհանուր գիծերու մէջ ներկայացուց Ազգ. Առաջնորդարանին ու անոր հովանիին տակ գործող եկեղեցիներուն, Ազգային Վարժարաններուն ու միաւորներուն տարած հոգեւոր ու ազգային աշխատանքը: Ապա շնորհաւորեց Վեր. Յարութիւնը, իր ստանձնած նոր պաշտօնին եւ որպէս նախագահ ընտրութեան առիթով, մաղթելով անոր բարի առաքելութիւն եւ բեղուն գործունեութիւն:

Վեր. Յարութիւն, իր կարգին, ներկայացուց Հալեպի մէջ Հայ Աւետ. եկեղեցւոյ գործունեութիւնը եւ փոխադարձ յարգանքը, վստահութիւնը եւ գործակցութիւնը Հայ Առաքելական Մայր Եկեղեցւոյ հետ:

Հանդիպումի աւարտին Առաջնորդ Սրբազանը հիւր հոգեւորականին յանձնեց յուշանուէր մը, եւ բարի առաքելութիւն մաղթեց իր հոգեւոր ծառայութեան մէջ:

PRELATE WELCOMES ARMENIAN EVANGELICAL WORLD COUNCIL PRESIDENT REV. HAROUTUNE SELIMIAN

On the morning of Wednesday, October 29th, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed to the Prelacy the newly elected president of the Armenian Evangelical World Council and president of the Armenian Evangelical Community in Syria Rev. Haroutune Selimian. The Reverend was accompanied by treasurer of the Armenian Evangelical Union Mr. Zaven Khanjian.

H.E. Archbishop Khajag Hagopian, Prelate of Canada, H.G. Bishop Shahan Sarkissian, Prelate of Aleppo, and Christian Education Co-Director Very Rev. Fr. Barthev Gulumian were also in attendance.

The meeting offered the opportunity for both parties to become more familiarized with the endeavors of the other. The Prelate acquainted Rev. Selimian with the varied work that is carried out by the Prelacy and its churches, schools, and the number of committees serving under its auspices, while Rev. Selimian communicated to the Prelate the activities and mission of the Armenian Evangelical Church in Syria.

The Prelate congratulated Rev. Selimian on his recent election as president of the Arm. Evangelical World Council, wishing him success in his new post, and presented him with a memento.